

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2011 թվականի N 644-Ն

### «ՀՍԿԻՉ ՆՇԱՆՆԵՐԻ (ՂՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ) ՄԻՋՈՑՈՎ ՏԵՍԱԶԱՅՆԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Հսկիչ նշանների (ղրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր ղրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման լիազոր մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում «Հսկիչ նշանների (ղրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր ղրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաստատել հսկիչ նշանների (ղրոշմապիտակների) նմուշները (էսքիզները).

2) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սահմանել հսկիչ նշանների (ղրոշմապիտակների) ձեռքբերման հայտի և նախկինում ձեռք բերված հսկիչ նշանների (ղրոշմապիտակների) օգտագործման մասին հաշվետվության ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2011 թ. մայիսի 24  
Երևան